

Ս.թ. սեպտեմբերի 3-ից 5-ը Երևանում տեղի ունեցավ Եվրոպայի ընտրական իշխանությունների ընկերակցության 18-րդ ամենամյա համաժողովը:

Համաժողովի գլխավոր թեման՝ «Ընտրական իրավունքի դատական պաշտպանությունը»:

Համաժողովին մասնակցեցին 32 երկրի և տարբեր միջազգային կազմակերպությունների մոտ 150 ներկայացուցիչ, մասնավորապես՝ սահմանադրական դատարանների, դաշնային ընտրական դատարանների, կենտրոնական ընտրական հանձնաժողովների նախագահներ և/կամ անդամներ, փորձագետներ:

Համաժողովի թեմաներից էին «Դատարանների դերն ընտրական գործընթացներում», «Ակտիվ ընտրական իրավունքի վերականգնման մեխանիզմները և դատական պաշտպանությունը», «Ընտրական գործընթացներում սոցիոլիզիայի կիրառման միջազգային փորձը», «Ընտրական գործընթացի մասնակիցների պարտականությունները» «Ընտրողների ճշգրիտ ցուցակների կազմումը» և այլն:

Համաժողովի ընթացքում կազմակերպվել էր ընտրական սարքավորումների և ծառայությունների ցուցահանդես:

Կազմակերպիչներն էին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը և Եվրոպայի ընտրական իշխանությունների ընկերակցությունը՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի՝ Այ Էֆ Ի Էս-ի հովանավորությամբ:

Համաժողովը տեղի ունեցավ «Անի» հյուրանոցային համալիրում:

Եվրոպայի ընտրական իշխանությունների ընկերակցություն
(համառոտ տեղեկատվություն)

Հիմնադրվել է 1991թ.: Մշտապես գործող մարմնի՝ Քարտուղարության նստավայրը՝ Բուդապեշտ՝ Հունգարիա:

Ընկերակցությունն ընդգրկում է 24 անդամ-պետություն. Ալբանիա, Ադրբեջան, Բելառուս, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Թուրքիա, Լատվիա, Լիտվա, Լեհաստան, Խորվաթիա, Հայաստան, Հունգարիա, Ղազախստան, Ղրղզստան, Մակեդոնիա, Մոլդովա, Մոնտենեգրո, Ռումինիա, Ռուսաստան, Սերբիա, Սլովակիա, Սլովենիա, Վրաստան, Ուկրաինա:

Հայաստանն ընկերակցության անդամ է 1999 թ-ից:

Ընկերակցությանն աջակցող անդամ-կազմակերպություններից են Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամը (Այ Էֆ Ի Էս), գործընկերներից են International IDEA-ն, ԵԱՀԿ-ն, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը, Եվրոպայի խորհուրդը, ՄԱԿ-ի ընտրական համակարգի աջակցության բաժինը և այլն:

Յուրաքանչյուր տարի անդամ-պետություններից մեկում կազմակերպվում է ընկերակցության համաժողով: Սա փորձի փոխանակման, ընտրական գործընթացներին վերաբերող հարցեր քննարկելու, ինչպես նաև անդամ-պետությունների ընտրական իշխանությունների միջև համագործակցություն հաստատելու հնարավորություն է:

Ընկերակցությունը մեկ տարի ժամկետով նախագահում է այն երկրի կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը, որտեղ անցկացվելու է հերթական համաժողովը: